

«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

*Ավարտական հետազոտական
աշխատանք*

Թեմա՝ Աշխատանքային տեսրերով աշխատելու իմ փորձից

Առարկա՝ Տեխնոլոգիա

Ուսուցիչ՝ Նազարյան Ռուզաննա

Դպրոց՝ Երևան հ. 178 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

ԵՐԵՎԱՆ – 2023


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Գեղագիտական և ստեղծագործական զարգացման միջոց	5
Տարրական դասարաններում տեխնոլոգիա առարկան	5
Կրթական ոլորտի նպատակները և խնդիրները	6
Աշակերտները սովորում են աշխատել	7
Բնական և արհեստական նյութեր	8
Թղթերի հրաշալի աշխարհում, դասավանդման կիրառելի մեթոդներ, հետազոտական փուլ	10
Դասի պլան	15
Եզրակացություն	17
Գրականության ցանկ	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դասարաններում տեխնոլոգիա առարկան աշակերտների մտավոր, ֆիզիկական, ստեղծագործական և գեղագիտական զարգացման կարևոր միջոց է: Տվյալ դասընթացի կրթական խնդիրն է աշակերտների տեխնոլոգիական պատրաստվածության ապահովումը, որը ներառում է աշխատանքային կուլտուրայի դաստիարակումը, ինչպես նաև ունակությունների և ընդհանուր աշխատանքային հմտությունների ձևավորումը: Տեխնոլոգիան համալիր գիտություն է, որն իր մեջ ամփոփում է միջառարկայական կապեր՝ խթանելով դրանց ուսուցման արդյունավետության բարձրացումը: Այդ բոլոր խնդիրներն արդյունավետ լուծում կատանան ինչպես տեսական, այնպես էլ գործնական-ստեղծագործական աշխատանքներ կատարելիս, այն է՝ տարբեր գեղարվեստական կիրառական նմուշների պատրաստում, տեխնիկական մոդելների հավաքում, ստեղծագործական նախագծերի կատարում և այլն: Տարրական դասարանների դասագրքերում ընդգրկված են միջարք առաջդրանքներ, որոնք նպաստում են աշակերտների ստեղծագործական մտքի, կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՌԱՐԿԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ



ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ

ՄԵԹՈԴԻԿԱ

Տարրական դասարանների դասագրքերում առաջադրված նյութերը հնարավորություն են տալիս ազատ ստեղծագործելու

գտնելու խնդրի լուծման համարձակ և ինքնատիպ մոտեցումներ:

Ձեռք բերված գիտելիքները սովորողներին մղում են նորովի գնահատել իրենց շրջապատող աշխարհը և ազատորեն ստեղծագործել :Դասագրքում տրված արաջադրանքները կիրառելի են կյանքում: Դրանք աշակերտների մեջ զարգացնում հնարամտություն, երևակայություն, տարբեր իրավիճակներում

արագ կողմնորոշվելու ունակություն :

Տեխնոլոգիան ըստ էության գործնական-ուղղորդող ուսուցողական ոլորտ է : Սովորողների կողմից նյութերի , էներգիայի և տեղեկատվության ձևափոխման ուսումնասիրումը

Թույլ է տալիս նրանց ձեռք բերել այդ ձևափոխումներին տիրապետելու փորձ , օգնում է մասնագիտության և հետագա աշխատանքի ընտրությանը :Այդպիսով ապահովվում է սովորողների հաջորդական անցումը ընդհանուրից մասնագիտական կրթությանը :Առարկայի ուսուցման դասաժամերին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել աշխատանքային անվտանգության տեխնիկայի կանոնների,

հակահրդեհային միջոցների և աշխատանքի հիգիենայի ուսումնասիրմանն ու պահպանմանը :

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

<<Տեխնոլոգիա.>> կրթական ոլորտի նպատակներն են.

- . սովորողների պոլիտեխնիկական զարգացումը,
- . ստեղծագործական և գեղագիտական զարգացումը
- . ինքնաճանաչման հնարավորության ապահովումը,
- . մասնագիտությունների ուսումնասիրումը և կողմնորոշումը:

<<Տեխնոլոգիա>> առարկայի վերջնարդյունքը .

- .տեխնոլոգիական և աշխատանքային կուլտուրայի ձևավորում, աշխատասիրության դաստիարակում,
- .նախագծային, կոնստրուկտորական և դեկորատիվ-կիրառական գործունեության ձևավորում,
- .մասնագիտական կողմնորոշման ունակությունների ձևավորում :

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԵԼ

<<Տեխնոլոգիա>> ուսուցողական ոլորտի բովանդակության

մեջ հատուկ տեղ է հատկացվել ձեռքի աշխատանքի կարևորությանը: Դրա հակառակորդները նշում են, որ արտադրությունում ձեռքի աշխատանքը լայնորեն փոխարինվում է մեքենայացվածով: Սակայն ձեռքի աշխատանքի ներմուծումն անհրաժեշտ է այլ միտումով՝ անձի զարգացման նպատակով: Բացի այդ, փորձնականորեն ապացուցված է, որ

ձեռքի աշխատանքը, հատկապես նախադպրոցական և ցածր դասարանի աշակերտների մոտ, ակտիվորեն զարգացնում է ձեռքերի մանր շարժունակությունը, որը խիստ անհրաժեշտ է մտածողության ձևավորմանը: Վերջապես, կարելի է ասել, որ ձեռքի աշխատանքի ունակությունները դեռ երկար ժամանակ անհրաժեշտ կլինեն առօրյա կյանքում՝ հատկապես արտակարգ իրավիճակներում:

Առարկայի բոլոր բաժինների բովանդակությունները պետք է ունենան ընդհանուր գծեր՝ .աշխատանքի կուլտուրա- աշխատանքային գործընթացի պլանավորում և կազմակերպում ,գործիքների և մեխանիզմների ընտրություն, աշխատատեղի կազմակերպում, աշխատանքի անվտանգության ապահովում, տեխնոլոգիական և աշխատանքային կարգապահություն ,արտադրանքի որակի վերահսկում :

ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Օգտագործելով տարբեր բնական և արհեստական նյութեր,

կարելի է ստեղծագործել :

Ծառերի ճյուղերը ,տերևները ,ծաղիկները ,խոտերը ,ծղոտը ,

ավազը , քարերը մեր ձեռքերում կարող են նոր շունչ առնել:

Գեղեցիկ է հայրենի բնությունը: Այն ստեղծագործելու համար

անսպառ աղբյուր է:Արևը և ամպերը ,դաշտերն ու անտառները,

սարերը, ժայռերը, գետերը, լճերը միշտ էլ հանդիսացել են

մարդկանց ներշնչանքի աղբյուր : Ներշնչվելով բնությունից

և օգտագործելով բնական հարստությունները ` մարդը ստեղծագործել է:Բոլոր

ժամանակներում ժողովրդական վարպետները պատրաստել են գեղեցիկ իրեր :

Հայ վարպետների ստեղծագործությունները հայտնի են ամբողջ

աշխարհում:Իրենց ստեղծագործություններում նրանք օգտագործել են ինչպես

բուսական ,այնպես էլ հանքային բնական նյութեր:



Արհեստական նյութերը օգտագործում ենք կոճակներ,

արհեստական թելեր և գործվածքներ , փայլփլուն թղթեր :



ԹՂԹԵՐԻ ՀՐԱՇԱԼԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՓՈՒԼ

Դասի ժամանակ պատրաստվող յուրաքանչյուր կոնկրետ

շինվածքի մասին ավելի ծավալուն տեղեկություններ կարելի

է հաղորդել՝ կազմակերպելով դաս-զրույց , որի ժամանակ

կարելի է օգտագործել ուսումնական տեսաժապավեն :

Օրինակ՝ թղթի ծագումը ,ինչպես և ինչից են այն պատրաստում:

Գործնական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է

տեղեկություններ հաղորդել մշակման տեխնոլոգիական հնարավորությունների և օգտագործման բնագավառների մասին:Ինքնուրույն աշխատանքից առաջ կարելի է կատարել

քննարկում, իսկ աշխատանքի ավարտից հետո՝ ընդհանուր ամփոփում:

Առաջին դասարանի համար նախատեսված է աշխատանքային




Տեսք:Այն իրենից ներկայացնում է կիսապատրաստվածք,որը

Կարելի օգտագործել տարբեր աշխատանքներ կատարելիս:

Մշակերտը ծանոթանում է թղթի տեսակներին, սոսնձման ձևերին և մկրատով անվտանգ աշխատելու կանոններին :

Ցուցադրելով գունավոր թղթից կտրված քառակուսին, երեխաներին ներկայացնում են,որ սա <<Կախարդական քառակուսի>> է, կարելի է նրան անվանել

հրաշալիքառակուսի, որովհետև նա հրաշքներ է գործում և կարող է ստանալ
ցանկացած տեսք: Քառակուսին անկյունից անկյուն ծալելով ստանում ենք երկու
եռանկյունի, որից կարելի է պատրաստել սունկ:



Հաջորդ դասին կրկնում եմ, որ ձեզ հյուր է եկել կախարդական

քառակուսին, որը իր ընկերների՝ եռանկյունիների հետ կօգնի

ձեզ պատրաստել եղնի :



Եվ այսպես բոլոր դասաժամերին կախարդական քառակուսին

հյուր է գալիս ու ստեղծում հետաքրքիր պատկերներ ծալման
և կտրման միջոցով, ամրապնդելով աչքաչափի, ինքնուրույն,
ուշադիր և համբերատար աշխատանքի դաստիարակում:



Աշխատանք թղթով և ստվարաթղթով թեմայում կան աշխատելու տարբեր ձևեր՝ ապլիկացիա ,օրիգամի ,խճանկար:


ԱՊԼԻԿԱՑԻԱ-թղթի վրա հարթ պատկերագրում:



ՕՐԻԳԱՄԻ- ճապոներեն տերմին է, որը նշանակում է

<<Օրի>>-ծալում, <<գամի>>-թուղթ՝ այսինքն

ծալադրման մեթոդ:



ԽՃԱՆԿԱՐ - եռանկյունիներով



ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան-առաջին

Դասի թեման-Սունկ

Դասի նպատակը-Ծանոթացում թղթի օգտագործման

բնագավառներին:

Ձեռքի շարժումների կոորդինացում և աչքաչափի զարգացում:

Աշխատատեղում կարգուկանոնի պահպանում:

Անհրաժեշտ պարագաներ- գունավոր թղթեր՝կարմիր, շականակագույն,մկրաստ
,սոսինձ:

Դասի ընթացքը :

__Բարև, ես կախարդական քարակուսին եմ:Բոլորը ինձ անվանում են հրաշալի
քառակուսի:Իսկ դուք կռահում եք՝ ինչու:

Որովհետև ես հրաշքներ եմ գործում:Ես կարող եմ մեկ թիթեռի

տեսք ստանալ, մեկ՝ ինքնաթիռի:Դե ինչ, եկեք փորձենք քառակուսի թղթից ստանալ
սունկ:Երեխաներ իսկ դուք գիտեք,

Որ սնկերը լինում են նաև թունավոր:Բայց այսօր մենք կպատրաստենք միայն
զեղեցիկ և կախարդական սնկեր:Դրա համար.

.քառակուսին ծալում ենք անկյունագծով

.սա կլինի սնկի գլուխը .մյուս քառակուսին ծալում ենք երկտակ, սա էլ սնկի ոտքն է,
.իսկ հիմա սոսնձի օգնությամբ միացնենք գլխարկը ոտքին,.այժմ դուք կարող եք
սունկը ձևավորել ձեր ց .մտածեք էլ ինչպես կարելի է պատրաստել սունկ :

Դասարան-առաջին

Դասի թեման-Եղևնի

Դասի նպատակը-Ծանոթացում ծալման աշխատանքի համարօգտագործվող թղթերի հատկություններին:Թուղթը ծալելու,ձեռքով կտրելու գործողության վարժեցում:Անհրաժեշտ պարագաներ-կանաչգույնի թուղթ ,մկրատ ,սոսինձ:

Դասի ընթացքը-Սիրելի երեխաներ ,ձեզ կրկին հյուր է եկել կախարդական քառակուսին:Քառակուսին իր ընկերների հետ կօգնի ձեզ պատրաստել մի շատ հետաքրքիր մոդել, եղևնի: Նույնձալումների եղանակով կպատրաստենք նաև եղևնին:

.Ծալենք բոլոր երեք կանաչ քառակուսիները անկյունագծով

ստանալով եռանկյուն պատկեր:

.Սոսնձի օգնությամբ միացնենք քառակուսիները` ըստ

մեծության`մեծ,միջին , փոքր :

.Եղևնին պատրաստ է, այն կարող եք զարդարել ձեր

ցանկությամբ:

.Փորձեք հորինել եղևնու այլ տարբերակներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տարրական դասարաններում տեխնոլոգիայի դասավանդումը

օգնում է աշակերտներին զարգացնել հմտություններ, կարողություններ, երևակայություն , անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնների պահպանում :

Երեխան հմուտ աշխատում է մկրատով , սոսնձով , կարողանում է ինքնուրույն ստեղծագործել :

Սակայն դա արդյունավետ է առավելագույնը 20 հոգուց բաղկացած դասարաններում, 36 աշակերտից կազմված դասարանները պարտադիր պետք է կիսվեն : Հարմարավետ պայմաններում աշակերտները ստեղծում են սպասվածից ավելին, երբեմն իրենք հորինում են ավելի հետաքրքիր աշխատելու ձևեր: Երեխայի երևակայությունը անսպառ է ,նա գույների միջոցով արտահայտում է իր հոգեվիճակը և հայտնվում է իր ստեղծած աշխարհում:

Դասավանդումը բավականին բարդ գործընթաց է, որի կատարելագործման համար անհրաժեշտ է ուսուցչի մշտապես կատարելագործված մասնագիտական կարողությունները :

<<Տեխնոլոգիա>> առարկայի դասաժամին իրականացված

աշխատանքները ցույց տվեցին ,որ համագործակցային մեթոդների կիրառումը զգալիորեն բարձրացնում է նյութի յուրացման աստիճանը :Այդ մեթոդները բոլորի համար ստեղծում են բարենպաստ միջավայր, կատարելագործում են

ուսուցիչ-աշակերտ,աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տեխնոլոգիա Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան
2. Տեխնոլոգիա առարկայի Հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Ս. Հովսեփյան, Մ. Աղաջանյան, Մ. Բարսեղյան